

ԳՎՎԻԹ ԱՆՀԱՂԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՆՈՐ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Benedetta Contin, *David l'Arménien et l'école d'Alexandrie. Recherche sur la formation du vocabulaire épistémologique des œuvres grecques et arménienne*, Pontificio Instituto Orientale (Orientalia Christiana analecta. 301), Roma, 2017

Հոռմի Պապական արևելյան ինստիտուտի *Orientalia Christiana Analecta* շարքի 301-րդ հատորը բովանդակում է իտալացի հայագետ Բենեդետտա Կոնտինի «Դավիթ Հայր և Ալեքսանդրայի դպրոցը» (*David l'Arménien et l'école d'Alexandrie*) խորագրով ուսումնասիրությունը՝ նվիրված հայ ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթին: Մենագրության հիմքում ընկած է Դավթի հունարեն և հայերեն փիլիսոփայական գրվածքների իմացաբանական բառամթերքի հետազոտությունը:

Գիրքը բաղկացած է 4 գլխից (263 էջ): Առաջին գլխում (էջ 33-55) հեղինակն անդրադառնում է Դավիթ Անհաղթի անձի, ապրած ժամանակի և գրական ժառանգության խնդրին՝ առաջադրելով սեփական վարկածը: Համեմատելով հայկական և հունական աղբյուրների հաղորդած վկայությունները, ինչպես նաև մերօրյա ուսումնասիրողների կարծիքները, և մասնավորապես հիմնվելով Մ. Ռուեչեի<sup>1</sup> տեսակետի վրա՝ Կոնտինը հավանական է համարում, որ Դավիթ Անհաղթը, ինչպես նաև կեղծ-էլիասը աշակերտել են Ստեփանոս Ալեքսանդրացուն (550/555-638): Այսպիսով, նա Դավիթ Անհաղթին համարում է 7-րդ դարի հեղինակ՝ Ալեքսանդրիայի Պլատոնական դպրոցի վերջին ներկայացուցիչներ:

<sup>1</sup> M. Roueché, “The Definitions of Philosophy and a New Fragment of Stephanus the Philosopher”, *Job* 40 (1990), pp. 107-128.

րից մեկը: Հեղինակը փորձում է դասակարգել Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անունով հայտնի փիլիսոփայական և աստվածաբանական երկերը՝ առանձնացնելով 5-7-րդ դդ. միջնադարյան Հայաստանում ապրած երեք «Դավիթներ»:

1. 5-րդ դարում ապրած Դավիթ Անհաղթ փիլիսոփա՝ «Բարձրացուցէք» ներբողի հեղինակը, որը կարող է նույնական լինել Մովսես Խորենացու անվան հետ կապվող Դավթի հետ:

2. Դավիթ Ներգինացի/Ներքինացի (6-րդ դարի վերջ – 7-րդ դարի երկրորդ կես) «Սահմանք իմաստասիրականք»-ի, «Պորփյուրի ներածություն», Արիստոտելի «Կատեգորիաների» և Արիստոտելի «Առաջին Անալիտիկայի» մեկնությունների, ինչպես նաև՝ «Առաջը հինգ», «Վասն բաժանման», «Ամենայն շար տանջելի»<sup>2</sup> երկերի հեղինակ: Այս Դավիթը հավանաբար աշակերտել է Ստեփանոս Ալեքսանդրացուն:

3. Դավիթ փիլիսոփա (7-րդ դ. երկրորդ կես), որի անձնավորության մեջ հեղինակը միավորում է Դավիթ Հարքացուն, Դավիթ Տարոնացուն և Դավիթ Բագրևանդցուն՝ հիմնվելով Պողոս Անանյանի ուսումնասիրության վրա<sup>3</sup>:

Քննվող մենագրության շրջանակից դուրս է Դավիթ Անհաղթի վերաբերյալ միջնադարյան բոլոր աղբյուրների (ձեռագրերի հիշատակարաններ, Դավթի երկերի մեկնություններ, պատճառներ և այլն) քննությունը: Նշենք սակայն, որ գրքում արտացոլված է այն սխալ կարծիքը, թե ըստ ներսես Շնորհալու՝ Դավիթ Անհաղթը Խաչին նվիրված իր ներբողն արտասանել է Աթենքում յոթնամյա կրթությունն ավարտելուց հետո<sup>4</sup>: Մինչդեռ իրանականում ներսես Շնորհալին «Բարձրացուցէք»-ի մեկնության մեջ թվարկում է ներբողի ստեղծման վերաբերյալ միջնադարում տարածված կարծիքները, այդ թվում՝ Աթեն-

<sup>2</sup> Այս երկր հայտնի է Գրիգոր Նյուացու (PG 46, p. 541), ինչպես նաև՝ Գիդիմոս Ալեքսանդրացու (PG 39, pp. 1088-1089) անվամբ, վերագրվում է նաև Հովհաննես Կեսարացուն (տե՛ս *Ioannis Caesariensis presbyteri et grammatici Opera*, ed. **M. Richard**, Brepols-Tourhout, 1977):

<sup>3</sup> Տե՛ս Պ. Անանեան, «Դավթ Անհաղթի անախյ մկի հառք. քննութիւն եւ բնագիր», *Բազմավեպ*, 1956, մարտ (թիւ 3), էջ 63-70, թիւ 4-5, էջ 89-95:

<sup>4</sup> Տե՛ս *Definitions and Divisions of Philosophy by David the Invincible Philosopher*, English Translation of the Old Armenian Version with Introduction and Notes by **B. Kendall, R.W. Thomson**, Chico, California, 1983, p. XVI: Հմտ. **Calzolari V.**, “David et la tradition Arménienne,” *L'œuvre de David l'Invincible et la transmission de la pensée grecque dans la tradition arménienne et syriaque* (Commentaria in Aristotelem Armeniaca-Davidis Opera Vol. 1), **V. Calzolari - J. Barnes** (éds), Leiden, 2009, pp. 25-26:

քում գրված լինելը, և այն «ստահօդ» է համարում: Շնորհալին վկայում է, որ Դավիթ Անհաղթին իր Ներբողը գրել է Գյուտ կաթողիկոսի խնդրանքով՝ ընդդեմ Հայաստան ներթափանցած նեստորականներին<sup>5</sup>:

Հեղինակն առաջին գլխի վերջում համառոտակի անդրադառնում է Դավիթ Անհաղթի անունով հայտնի չորս փիլիսոփայական երկերի հրատարակություններին և ժամանակակից թարգմանություններին:

Երկրորդ գլխում (էջ 57-78) Կոնտինը ներկայացնում է փիլիսոփայական չորս գրվածքների կառուցվածքը՝ համադրելով հայերեն և հունարեն բնագրերը, մատնանշելով դրանց միջև առկա ակնառու տարբերությունները: Իսկ միայն հայերենով պահպանված «Արիստոտելի Առաջին Անալիտիկայի մեկնություն» դեպքում տրվում է հայերեն բնագրի կառուցվածքային բաժանումը: Այս գլխում արծարծվում է նաև «Արիստոտելի Կատեգորիաների մեկնություն» հեղինակի հարցը (Դավիթ-Էլիաս)<sup>6</sup>: Համեմատելով մի շարք եզրույթներ և արտահայտություններ՝ Բ. Կոնտինը ակնհայտ ընդհանրություններ է նկատում «Սահմանք իմաստասիրականք»-ի և «Կատեգորիաների մեկնություն» միջև: Այսպիսով, Ս. Արևշատյանից հետո, սույն ուսումնասիրությունն էլ ավելի հիմնավորված ու համոզիչ է դարձնում այն տեսակետը, որ «Արիստոտելի Կատեգորիաների մեկնությունը» պատկանում է Դավիթ Անհաղթի, այլ ոչ թե Էլիասի գրչին:

Երրորդ գլխում (էջ 79-100) հեղինակը կատարում է «Սահմանք իմաստասիրութեան» երկի հայերեն և հունարեն բնագրերի համեմատական վերլուծություն՝ ներկայացնելով ուշագրավ դիտարկումներ մի շարք լեզվական և մտահայեցական տարբերությունների վերաբերյալ: Բանասիրության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Դավիթ երկերը սկզբնապես գրվել են հունարեն, այնուհետև թարգմանվել են հայերեն՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից: Անդրադառնալով այն հատվածին, որտեղ հունարենում «Հեկտոր»-ի փոխարեն հայերենում հանդիպում է «Տիգրան» անունը, հեղինակը կարծիք է հայտնում, որ հայկական լսարա-

<sup>5</sup> Տե՛ս Վնակ. ձեռ. 511, 67ա, ՄՄձեռ. 1409, 290աբ, ՄՄ 6816, 4աբ (Բ. Կոնտինը վկայակոչում է այս վերջին ձեռագիրը):

<sup>6</sup> Հունարեն բնագիրը հրատարակության պատրաստած Ա. Բուսեն այս երկը վերագրել է Էլիաս իմաստասերին, տե՛ս *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria*, ed. A. Busse, Berolini, 1900: Այս վարկածին հետևել է հայերեն բնագրի առաջին հրատարակիչ Հ. Մամանյանը (*Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի՝ ընծայեալ Էլիասի իմաստասիրի*, Ս. Պետերբուրգ, 1911): Ս. Արևշատյանը հիմնավորել է, որ այն պատկանում է Դավիթ Անհաղթի գրչին, տե՛ս Ս. Արևշատյան, «Դավիթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ», *ԲՄ*, հ. 9, Երևան 1969, էջ 7-22:

նը քաջածանոթ էր հունական մշակույթին, ուստիև կարիք չկար փոխարինելու «Հեկտոր»-ը «Տիգրան»-ով: Մյուս կողմից՝ «Տիգրան» անունը կարող էր անծանոթ լինել հունական միջավայրում: Այս առումով, Բ. Կոնտինն առաջադրում է այն վարկածը, որ հայերեն բնագիրը գրվել և մշակվել է Դավիթ կամ գոնե նրա աշակերտներից մեկի ձեռքով: Հետազոտելով պատմական, անձնական և առասպելական անունների օրինակները՝ հեղինակը մատնանշում է, որ հայերեն և հունարեն բնագրերում դրանց կիրառման միասնական սկզբունք չկա (օրինակ՝ մի դեպքում «Հեկտոր»-ը թարգմանված է «Տիգրան», «Ջևա»-ի փոխարեն հանդիպում է «Արամազդ»-ը, սակայն մեկ այլ հատվածում թե՛ հայերենում և թե՛ հունարենում առկա է «Ջևա» տարբերակը):

Հեղինակը քննում է հունարեն բնագրի *κατὰ τοὺς Στωϊκούς*-ի փոխարեն հայերենում հանդիպող «ի տոկոսին» արտահայտությունը՝ վիճարկելով Ս. Արևշատյանի և Ռ. Թոմսոնի ու Բ. Քենդալի այն կարծիքը, թե դա գրչական սխալ է (օրինակ՝ հայերենից անգլերեն թարգմանություն մեջ կարդում ենք *the Stoics*): Կոնտինը մատնանշում է «տոկոսիք» բառի «վաշխ» հոմանիշը՝ ցույց տալով, որ այս իմաստով բառը միանգամայն ընկալելի է «Սահմանք»-ի համապատասխան հատվածում: Վկայակոչվում է նաև Հովհաննես Սարկավազին (ԺԱ-ԺԲ դդ.) վերագրվող «Սահմանք»-ի Լուծմունքը, որտեղ նշյալ հատվածի մեկնության մեջ կիրառվում են և՛ «տոկոսս», և՛ «վաշխ» բառերը:

Չորրորդ՝ ամենաընդարձակ գլխում (էջ 100-254) կատարվում է Դավիթ Անհաղթի շորս հիմնական փոլիսոփայական երկերում գործածվող որոշ եզրերի և բանալի-հասկացությունների զուգադրական վերլուծություն: Իմացաբանական տեսանկյունից քննվում է հունարեն բառամթերքի հայերենում փոխադրման մեթոդը, ինչպես նաև՝ հայերեն բնագրերում դրանց կիրառման հնարավոր միօրինակությունը՝ բառային և իմաստային տեսանկյունից: Այսպես՝ քննության են ենթարկվում հայերեն «ազդումն» եւ «ներգործութիւն» եզրերը, որոնք համապատասխանում են հունարեն *ἐνέργεια*-ին: Հեղինակը ներկայացնում է բոլոր այն տեղիները (հունարեն և հայերեն բնագրերում և իր ֆրանսերեն թարգմանությունը), որտեղ գործածվում են այս տերմինները և դրանցով կազմված բառերը, ընդգծում դրանց կիրառման իմաստային նրբությունները, ընդհանրությունները և տարբերությունները: Նույն սկզբունքով են դիտարկվում «մտածութիւն», «մակամտածութիւն», «տրամախոհութիւն» և «միտք» բառերի կիրառությունները, դրանց համապատասխանությունը հունարեն

ἔννοια, ἐπίνοια, διάνοια և νοῦς եզրերին, ինչպես նաև դրանց հետ գործածվող իմացաբանական այլ հասկացություններ: Բնագրային և բառիմաստային հետազոտության արդյունքում հեղինակը ևս մեկ անգամ հաստատում է իր այն մոտեցումը, որ «Սահմանք իմաստասիրականք»-ի հայերեն բնագիրը շատ ավելի մաքուր և ինքնուրույն գործ է՝ խմբագրված հունարենի համեմատ: Ի դեպ, նույն կարծիքը նա առաջարկում է նաև «Պորփյուրի ներածության մեկնության» վերաբերյալ:

Փիլիսոփայական եզրույթների այսօրինակ քննությունը անշուշտ օգտակար է ոչ միայն բանասիրության տեսանկյունից, այլև Դավիթ Անհաղթի փիլիսոփայության իմացաբանական համակարգի առավել համակողմանի և խորը ուսումնասիրման համար: Կարևոր է, որ Դավիթ փիլիսոփայի գործունեությունը դիտարկվում է Ալեքսանդրյան Նորալատոնական դպրոցի մյուս նշանավոր ներկայացուցիչների շարքում, իսկ Դավթի երկերը հետազոտվում են նրանց գրվածքների համեմատությամբ: Առհասարակ, ամբողջ մենագրությունը կառուցված է հայկական և հունական ավանդույթների համեմատության հիման վրա, ինչը հետաքրքրական է հայկական նյութը փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում դիտարկելու տեսանկյունից: Բ. Կոնտինն անդրադառնում է անհաղթագիտության վիճարկելի և լուսաբանման կարոտ որոշ հարցերի՝ առաջադրելով ուշագրավ, երբեմն՝ համարձակ վարկածներ, որոնք իր իսկ խոսքով՝ դեռևս կարիք ունեն համակողմանի ուսումնասիրման և հիմնավորման:

Այսպիսով, Դավիթ Անհաղթին նվիրված ուսումնասիրությունների շարքը հարստացել է հետաքրքրական մի աշխատանքով, որը կարող է օգտակար լինել ուշ անտիկ շրջանի հունական, ինչպես նաև միջնադարյան հայկական փիլիսոփայության և բանասիրության հարցերով հետաքրքրվողների համար: